ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՄԵՆԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ ԱՐՄԵՆԻ

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՌԵՑԵՊՑԻԱՆ ԵՎ ՆՐԱ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԺԲ.00.01 «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետաիրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ԵՐԵՎԱՆ - 2023

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

АРМЕНАКЯН САРГИС АРМЕНОВИЧ

РЕЦЕПЦИЯ РИМСКОГО ПРАВА И ЕЕ РОЛЬ И ЗНАЧЕНИЕ В ФОРМИРОВАНИИ И ЭВОЛЮЦИОННОГО РАЗВИТИИ ЕВРОПЕЙСКОГО ПРАВА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01 «Теория и история государства и права, история государственных и правовых учений»

ЕРЕВАН – 2023

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գառնիկ Հրաչիկի Սաֆարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Աշոտ Հայկի Խաչատրյան**

իրավաբանական գիտությունների թեկնածու, ասիստենտ **Կարեն Սուրիկի Ամիրյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Հայաստանի Եվրոպական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023թ. դեկտեմբերի 2-ին՝ ժ. 11^{00}-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմին 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-ռուսական համալսարանի գիտական աշխատողների գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2023թ. հոկտեմբերի 20-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
իրավաբանական գիտությունների թեկնածու Ջ.Հ. Հայրապետյան

Тема диссертации утвервждена в Институте философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Сафарян Гарник Грачикович**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Хачатрян Ашот Гйкович**

кандидат юридических наук, асистент **Амирян Карен Суренович**

Ведущая организация: **Европейский университет Армении**

Защита состоится 2-ог декабря 2023г. 11^{00} часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (г. Ереван,0051, Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки РАУ.

Автореферат разослан 20-го октября 2023г.

Ученый секретарь специализированного совета кандидат юридических наук Дж. А.Айрапетян

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հռոմեացի իրավաբանները ստեղծել են հռոմեական իրավունքի գիտությունը, որը մեծ հեղինակություն է վայելում նաև այսօր: Դա եղել է մարդկության պատմության մեջ առաջին իրավագիտությունն աշխարհիկ իրավունքի վերացական նորմերով: Հռոմեացի իրավաբանների ժառանգությունը շարունակում է ակտիվորեն օգտագործվել ժամանակակից հասարակության մեջ: Ռեցեպցիայի օգնությամբ հռոմեական իրավունքն ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ազդել և շարունակում է ազդել եվրոպական օրենսդրության ու իրավագիտության զարգացման վրա: Դրա ազդեցությունը շարունակվում է իրավունքի տարբեր ճյուղերում՝ քաղաքացիականից մինչև միջազգայինը: Հռոմեական իրավունքի հասկացությունները, հայեցակարգերը, կատեգորիաները, ինստիտուտները, հիմնական սկզբունքները արտացոլված են մայրցամաքային իրավական համակարգի երկրներում:

Վերջին տասնամյակներում մեծանում է աշխարհի տարբեր երկրներում հռոմեական իրավունքի նկատմամբ գիտական հետաքրքրությունը: Դա կապված է մի շարք հետսոցիալիստական երկրների կողմից սոցիալիստական հասարակարգից դեպի ազատ շուկայական հարաբերություններին անցնելու հետ: Խոսքը Արևելյան Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ երկրների մասին է: Այս առումով այստեղ արդիական են դառնում իրավունքում մասնավոր ու հանրային ինստիտուտների և սկզբունքների դերի ու տեղի մասին գաղափարները, որոնց հիմքերը դրել է հռոմեական դասական իրավունքը:

Վերը նշված հանգամանքով պայմանավորված՝ ժամանակակից հայրենական իրավաբանական դոկտրինում նույնպես մեծանում է հռոմեական իրավունքի նշանակությունը: Շուկայական կառուցակարգերն անմիջապես առնչվում են հռոմեական իրավունքի հետ, որում կենտրոնական տեղ է զբաղեցնում սեփականության իրավունքի մասին ուսմունքը:

Հռոմեական իրավունքի դրույթները հարստացրել են մասնավոր իրավունքը ոչ միայն սեփականության իրավունքի և այլ իրավական ինստիտուտների առումով, այլև պարտավորական ու ժառանգման իրավակարգավորումների մասով: Հիմնականում մասնավոր իրավունքին է վերաբերվում հռոմեական իրավունքի տեսությունն ու եզրաբանությունը:

Հռոմեական իրավունքի հետազոտության գործնական ու տեսական արդիականությունը, սակայն, չի սահմանափակվում միայն շուկայական հարաբերությունների կիրառական նշանակությամբ: Իրավունքի տեսությունը հետազոտում է հռոմեական իրավունքի հայեցակարգերը, սկզբունքներն ու իրավական կառուցակարգերը՝ նպատակ ունենալով բացահայտել ու ընդհանրացնել իրավական համակարգերի, այդ թվում՝ եվրոպական իրավական համակարգի զարգացման օրինաչափությունները, ինչը թույլ է տալիս կանխորոշել նաև ազգային իրավական համակարգի մեջ անդրադարձող հռոմեական և արդի եվրոպական իրավունքի ինստիտուտների գործառնությունը:

Իրավագիտության համար հատուկ նշանակություն է ձեռք բերում

հռոմեական իրավունքի ընդօրինակման (ռեցեպցիայի) հետ կապված հիմնախնդիրների ուսումնասիրությունը: Հռոմեական իրավունքի ռեցեպցիան (փոխառումը, ընդօրինակումը) իրավական համակարգի և իրավական մշակույթի նշանակալից երևույթ է, որը բերեց իրավունքի համաշխարհային ստանդարտների կայացմանն ու իրավունքի ժամանակակից տեսության ձևավորմանը: Այս առումով հարկ է նշել, որ վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ կատարվում են էական փոփոխություններ, այդ թվում՝ մասնավոր իրավունքի ոլորտում, որոնց ակունքները կարելի է գտնել հենց հռոմեական իրավունքում:

Վերոնշվածով է պայմանավորված թեմայի ընտրությունը և դրա հետազոտության արդիականությունը:

Հետազոտության թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Հռոմեական իրավունքի հարցերով և մասնավորապես՝ դրա ռեցեպցիայով, առկա են բազմաթիվ աշխատություններ, սակայն թեման բացարձակապես սպառված չէ: Ժամանակակից աշխարհը նոր խնդիրներ է դնում հետազոտողի առջև: Այդպես, օրինակ, ներկա ժամանակներում պետության և իրավունքի պատմությունը պահանջում է երևույթի ուսումնասիրման համակարգայնության՝ հաշվի առնելով գործոնների ամբողջության ազդեցությունը (պատմահրավական, մշակութաբանական, կրոնական, մեթոդաբանական և այլն) այս կամ այն իրավունքի ձևավորման վրա:

Նոր մոտեցումները բացարձակապես չեն մերժում այն զգալի ձեռքբերումները, որոնք գիտնականներն հասել են նախկինում: Ժամանակակից գիտնականները հիմնվում են Ս.Ն. Ալեքսեևի, Բ.Գ. Բալաշևի, Ն.Պ. Բոգոլեպովի, Դ.Դ. Գրիմի, Ա.Գ. Գուսակովի, Ն.Ա. Դյուվերնուայի, Վ.Վ. Եֆիմովի, Լ.Ն. Զագուրսկու, Ա.Ն. Կազանցևի, Ն.Ի. Կրիլովի, Կ.Ա. Միտյուկովի, Ս.Ա. Մուրոմցևի, Կ.Ա. Միտյուկովի, Վ.Ի. Սինայսկու, Պ.Գ. Վինեգրադովի, Պ.Ս. Սուվորովի, Վ.Մ. Խվոստովի, Վ.Ա. Յուշկեվիչի և այլոց աշխատությունների վրա: Արդի ժամանակաշրջանում հռոմեական իրավունքի ուսումնասիրման գործում իրենց էական ներդրումն են արել հայրենական և ռուս գիտնականներ՝ Վ.Դ. Ավետիսյանը, Ն.Ա. Ապիյանը, Ա.Կ. Եսայանը, Գ.Հ. Սաֆարյանը, Մ.Մ. Բարիսևիչը, Վ.Գ. Գրաֆսկին, Դ.Վ. Դոժդյովը, Տ.Վ. Կաշանինան, Ա.Ի. Կոսարյովը, Լ.Լ. Կոֆանովը, Վ.Ա. Լետյաևը, Ի.Պ. Մեդվեդյևը, Լ.Վ. Միլովը, Պ.Բ. Նովիցկին, Վ.Ս. Ներսեսյանցը, Վ.Ա. Սավելյեվը, Ե.Ա. Սկրիպիլյովը, Ե.Վ. Սալոգուբովը, Ն.Ն. Սմիրնովան, Ա.Ա. Պոդոպրիգորան, Վ.Ա. Տոմսինովը, Մ.Խ. Հուտիզը, Ե.Օ. Խարիտոնովը և ուրիշներ:

Սակայն մի շարք դեպքերում անհրաժեշտ է փոխել գիտական հետազոտությունների ուղղությունը: Այսպես, խորհրդային ժամանակաշրջանում հռոմեական իրավունքը դիտարկվում էր իբրև բուրժուական իրավունքի բաղադրիչ մաս, բացառվում էր հռոմեական իրավունքի ու խորհրդային քաղաքացիական իրավունքի միջև եղած ժառանգականությունը:

Մայրցամաքային ընդհանուր իրավունքի ձևավորման տեսանկյունից հռոմեական իրավունքի ռեցեպցիայի հետ կապված հիմնախնդիրների լուծումը պահանջում է ավանդական և արդիական մոտեցումների համակողմանի և

քննական վերլուծություն: Իրավունքի տեսության արդի հայեցակարգային և մեթոդաբանական մոտեցումների միջոցով հնարավորություն է ընձեռվում բացահայտել հռոմեական իրավունքի ռեցեպցիայի նշանակությունը եվրոպական ընդհանուր իրավունքի ձևավորման ու կառուցման գործում:

Հետազոտության թեման ընտրվել է հեղինակի կողմից հռոմեական իրավունքի գիտության մեծացող արդիականության ու դրա ընկալման նոր առումների բացահայտման անհրաժեշտությամբ:

Հետազոտության օբյեկտն ու առարկան: Ատենախոսական հետազոտության օբյեկտը մայրցամաքային եվրոպական ընդհանուր իրավունքի պատմական, զարգացման և կայացման հիմնախնդիրն է: Հետազոտության առարկան է բացահայտել հռոմեական իրավունքի և նրա ռեցեպցիայի դերն ու նշանակությունը մայրցամաքային եվրոպական ընդհանուր իրավունքի և իրավագիտության կատեգորիալ ապարատի ձևավորման ու զարգացման գործում:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսական հետազոտության նպատակն է հռոմեական իրավունքի ռեցեպցիայի բովանդակության համալիր բացահայտման միջոցով ներկայացնել նրա տեսական ու կիրառական նշանակությունը եվրոպական ընդհանուր իրավունքի և իրավագիտության տեսական և կիրառական նշանակությունը միջնադարյան Եվրոպայում և հետագա ժամանակներում:

Վերոնշյալ նպատակից ելնելով, հեղինակը փորձել է լուծել հետևյալ խնդիրները՝

- բացահայտել հռոմեական իրավունքի ռեցեպցիայի էությունն ու նշանակությունն իրավունքի և իրավագիտության զարգացման խնդրում.
- բնութագրել հռոմեական իրավունքի ազդեցության հիմնական ուղղությունները և սահմանները եվրոպական ընդհանուր իրավունքի բովանդակության և հայեցակարգային մոտեցումների վրա.
- հետազոտել հռոմեական իրավունքի ռեցեպցիայի առանձնահատկությունները միջնադարյան Եվրոպայի պատմական զարգացման տարբեր փուլերում. միջնադարի (XI-XIII դարեր), Վերածննդի, հումանիզմի, Ռեֆորմացիայի, Լուսավորության, Նոր և Նորագույն ժամանակաշրջաններում.
- ներկայացնել հռոմեական իրավունքի արդիական նշանակությունն իրավունքի և իրավագիտության հետագա զարգացման խնդրում:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքները: Սույն ատենախոսական հետազոտության մեթոդների ընտրությունը պայմանավորված է օբյեկտի ու առարկայի առանձնահատկությամբ: Այս առումով հետազոտության ընթացքում օգտագործվել են համագիտական, մասնավոր գիտական ու հատուկ մեթոդները, այդ թվում՝ դիալեկտիկայի օրենքները, պատմական, պատմահրավական, համակարգային, համեմատական-իրավական, տրամաբանական-իրավաբանական վերլուծության մեթոդները:

Հետազոտության տեսական հիմքն են կազմել իրավունքի ու պետության տեսության և պատմության, ժամանակակից իրավունքի ճյուղային գիտությունների վերաբերյալ աշխատությունները, մասնավորապես՝ Վ.Դ. Ավետիսյանի, Ն.Ա. Ապիյանի, Ա.Կ. Եսայանի, Գ.Հ. Սաֆարյանի, Ս.Ս. Ալեքսեևի,

Յու.Գ. Ալեքսեևի, Գ.Մ. Բարացի, Ռ.Ս. Բևզենկոյի, Վ.Ա. Բելովի, Գ.Ջ. Բերմանի, Պ.Գ. Վինոգրադովի, Վ.Գ. Գրաֆսկու, Դ.Դ. Գրիմի, Դ.Վ. Դոժդևի, Ն.Ա. Դրովեռնուայի, Վ.Վ. Եֆիմովի, Բ.Ս. Երասովի, Ն.Պ. Զագոսկինի, Ի.Ա. Իսայևի, Վ.Պ. Կամիշանսկու, Լ.Ա. Կասոյի, Գ.Ի. Կաբակովայի, Ա.Ի. Կոսարյովի, Վ.Ա. Լետյայևի, Ի.Մ. Լուրյեի, Ի.Պ. Մեդվեդևի, Վ.Ս. Ներսեսյանցի, Ն.Վ. Պրոպի, Ե.Վ. Սալոգուբովայի, Ն.Ս. Սուվորովի, Գ.Ֆ. Շերշենևիչի, Ռ.Լ. Խաչատուրովի, Ի.Յա. Ֆրոյանովի, Ի.Ե. Էնգելմանի և այլոց գիտական հետազոտությունները:

Հետազոտության մեջ օգտագործվել են նաև գերմանացի գիտնականների աշխատությունները, ինչպիսիք են՝ Գ. Կաուֆմանը, Ռ. ֆոն Հերինգը, Ֆ.Կ. Սավինին, Հ. Քյոտցը, Գ.Ֆ. Պուխտան, Կ. ֆոն Չիլարկը և ուրիշներ:

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթը: Գիտական նորույթը, ամենից առաջ, արտահայտվում է «հռոմեական իրավունքի ռեցեպցիա» երևույթի նորովի մեկնաբանության, ինչպես նաև քննարկվող հիմնախնդրի համակարգված և ամբողջական հետազոտության մեջ: Այդ համատեքստում ժամանակակից իրավագիտության տեսանկյունից համակողմանի բացահայտվել և իմաստավորվել է հռոմեական իրավունքի ռեցեպցիայի էությունն ու բովանդակությունը, գործնական-կիրառական և տեսական, գոյաբանական և իմացաբանական առումներով վեր են հանվել հռոմեական իրավունքի ռեցեպցիայի հիմնական ուղղությունները, ինչպես նաև հռոմեական իրավունքի ներգործության սահմանների և ուղղությունների համալիրը մայրցամաքային եվրոպական ընդհանուր իրավունքի կայացման և հետագա զարգացման վրա:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներն են.

1. Իրավունքի տեսության մեջ ռեցեպցիան դիտարկվում է բացառապես իբրև հիմնական իրավական նորմերի և ինստիտուտների փոխառում կամ ընդօրինակում: Ընդ որում՝ հետազոտություններում բացառվում է իսկական ռեցեպցիայի գաղափարական առումը, որը, սակայն, առանցքային է: Այն, առաջին հերթին, սահմանում է «դոնորի» ընտրությունը, ռեցեպցիայի նյութը, ստացողի «հող»-ի վրա օտարերկրյա իրավական մշակույթի ներդրման հաջողությունը կամ անհաջողությունը: Այսպիսով՝ ռեցեպցիան հնարավոր է միայն ընդօրինակողի հստակ գաղափարախոսության պատճառով, որը թույլ է տալիս իրականացնել, ընդօրինակել ու յուրացնել օտար իրավական մշակույթը՝ ինստիտուտները, նորմերը, գաղափարները, հայեցակարգերը, կառուցակարգերը:

2. Աշխատանքում հստակորեն առանձնացվել են ռեցեպցիայի հետևյալ եղանակները՝ կամովին ռեցեպցիա և ռեցեպցիայի ոչ կամովին տեսակները: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում ռեցեպցիայի կամովին եղանակը, որը հատուկ նշանակություն ունի հռոմեական իրավունքի ներգործության պատճառների, կառուցակարգի ու արդյունքների բացահայտման համար: Ռեցեպցիան ի հայտ է գալիս սովորաբար պետահիրավական ինստիտուտների ճգնաժամերի ժամանակ ու կայանում է օտարերկրյա իրավունքի իրավական նորմերի, ինստիտուտների կամովին օգտագործման մեջ՝ գաղափարական, սոցիալ-տնտեսական և քաղաքական պատճառներով: Ոչ կամովին եղանակը, ըստ էության, ռեցեպցիա չի կարող համարվել, դա բռնադրանք կամ այսպես կոչված՝ «փափուկ ուժի» գործադրում է: Ռեցեպցիան հնարավոր է միայն կամովին եղանակով. երբ ըն-

դօրինակողը ոչ թե մեխանիկորեն, այլ գիտակցաբար ըմբռնում և գնահատում է օտար իրավունքի էությունը, բովանդակային առանձնահատկությունները և դրա փոխառնման արդյունքում ազգային իրավունքի զարգացման պոտենցիալ հնարավորությունը: Ռեցեպցիայի հարկադիր եղանակն արտահայտվում է ընդօրինակողի իրավական համակարգում այլ (խորթ, օտար) իրավական համակարգի տարրերի պարտադրման մեջ (օրինակ՝ բյուզանդական իրավունքի պարտադիր ներդրումը Հայաստանում՝ VI դարում):

3. Հռոմեական իրավունքի ռեցեպցիան միջնադարյան Եվրոպայում իրականացվել է երկու հիմնական ուղղություններով՝ գործնական-կիրառական առումով (իրավաստեղծ ու դատական պրակտիկայի ոլորտներում) և տեսական գիտական իմաստով (համալսարաններում յուրացնելով և զարգացնելով հռոմեական իրավունքի տեսական հասկացությունները, կատեգորիաները, ինստիտուտները, հայեցակարգերը), ինչի հետևանքով ձևավորվեց այսպես կոչված «պրոֆեսորական կամ համալսարանական իրավունքը»: Եվրոպական ընդհանուր իրավունքի ձևավորման վրա էական ազդեցություն են ունեցել նաև մարդկային բանականության պրիզմայի միջոցով բացահայտված կանոնական (աստվածային) իրավունքը:

4. Հռոմեական իրավունքի ուսումնասիրության շնորհիվ միջնադարյան Եվրոպայում ձևավորվեցին համալսարանական իրավունքը, ընդհանուր եվրոպական իրավունքը, որոնց հիմնական հասկացութային կատեգորիաները՝ արդարությունը (Aequitas), բարեխղճությունը (Bona Fides), արդար դատաքննությունը, օրենքների որոշակիությունը և համակարգվածությունը, տեսականի և գործնականի միասնականությունը և այլն, այժմ կազմում են արդի իրավունքի տեսության և օրենքագիտության հիմունքները: Մասնավորապես՝ գլոսսատորների և կոմենտատորների (հետգլոսատորների) դպրոցները հիմք դրեցին մայրցամաքային իրավաբանական դոգմատիկայի սկզբնավորմանը, հաստատեցին դոգմատիկ հետազոտությունների օբյեկտի սահմանները, սահմանեցին դրա գոյաբանական և իմացաբանական առումները, ձևավորեցին իրավագիտության ուրույն լեզուն և ոճաբանությունը, ուսուցանեցին հեղինակային տեքստի վերաբերյալ իրավաբանների գիտակցական մոտեցումը, ձևավորեցին և արմատավորեցին իրավունքի ընդհանուր սկզբունքների վերաբերյալ պատկերացումները, հռոմեական իրավունքի՝ որպես ընդհանուր իրավունքի (jus commue) միջոցով հաստատեցին իրավագիտության ելակետային, գաղափարական և հայեցակարգային մոտեցումների հարաբերական միասնությունը:

5. Եվրոպական ընդհանուր իրավունքը սոցիալական իրականության ակտիվ բաղկացուցիչն է, որի ինստիտուցիոնալ հիմքն են կազմում պատմականորեն ձևավորված ընդհանուր իրավունքի համակարգը, հայեցակարգային մոտեցումները, հիմնարար սկզբունքները, որոնք արտացոլված են Եվրոպական միության և ողջ եվրոպական իրավական համակարգում, որոնց ակունքները հռոմեական դրական իրավունքն ու իրավագիտությունն են: Հռոմեական իրավունքի և իրավագիտության սկզբունքներն ու հայեցակարգային մոտեցումները չեն կորցրել իրենց տեսական և գործնական նշանակությունը արդի եվրոպական

իրավունքի, իրավագիտության, իրավակիրառ պրակտիկային ոլորտում:

6. Հռոմեական իրավունքի ազդեցությունը դիտարկվում է նաև ժամանակակից հայ ազգային իրավունքի վրա, այնքանով, որքանով մասնավոր իրավունքում ներառվել են ազատ շուկայական հարաբերություններին բնորոշ քաղաքացիական-իրավական ինստիտուտներ: Ընդ որում՝ հայրենական քաղաքացիական իրավունքն ուղղակիորեն չի կիրառել հռոմեական իրավունքի իրավական լուծումները: Ազգային քաղաքացիական իրավունքն առաջին հերթին փոխառել է հռոմեական մասնավոր իրավունքի գաղափարները, նրա իրավական լուծումների էությունը՝ դրա հիման վրա մշակելով սեփական իրավական կառուցակարգերը: Այդ իսկ պատճառով էլ հայրենական իրավագիտության դեպքում չի կարելի խոսել հռոմեական իրավունքի ուղղակի ռեցեպցիայի մասին: Հայաստանում որպես հռոմեական մասնավոր իրավունքի ռեցեպցիայի առանձնահատկություն կարելի է դիտարկել այն հանգամանքը, որ հռոմեական իրավունքը կարևոր դեր է խաղացել ոչ այնքան օրենսդրության մշակման (դրա նշանակությունն այս ոլորտում կարելի է անուղղակի համարել), որքան իրավաբանական գիտություն զարգացման գործում: Ուստի, այս առումով տեղին կլինի խոսել հռոմեական մասնավոր իրավունքի ոգու, այլ ոչ թե նրա դոգմայի ռեցեպցիայի մասին:

Հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը սահմանվում է պատմահրավական քաղաքակրթական մոտեցումների օգնությամբ հռոմեական իրավունքի բովանդակության վերլուծությամբ և իրավագիտության համար դրա արժեքի բացահայտմամբ: Աշխատանքի եզրակացություններն ու դրույթները թույլ են տալիս ընդարձակել հռոմեական իրավունքի ռեցեպցիայի մոդելների յուրահատկությունը, օրինակ, եվրոպական ընդհանուր իրավունքի համակարգի կայացման և ձևավորման տեսանկյունից:

Գործնական և տեսական դրույթներն ու եզրակացությունները կարող են հաշվի առնվել իրավունքի ռեցեպցիայի, իրավունքի տեսության, եվրոպական իրավունքի հիմնախնդիրների ուղղությամբ իրականացվող գիտական հետազոտություններում, ուսումնական ձեռնարկների, մեթոդաբանական ձեռնարկների մշակման գործընթացում, իրավաբանական բուհերի ու ֆակուլտետների ուսանողների համար:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունը: Սույն ատենախոսական աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետահրավական հետազոտությունների բաժնում, որտեղ իրականացվել է դրա քննարկումը և գրախոսությունը:

Աշխատանքի հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են ստացել հեղինակի կողմից հրատարակված մի շարք գիտական հրապարակումներում:

Աշխատանքի կառուցվածքը: Սույն ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, որոնք ներառում են ութը պարագրաֆ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի հետազոտության արդիականությունը, ներկայացվում է գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության՝ «Մայրցամաքային ընդհանուր իրավունքի ձևավորման մեթոդաբանական պատմատեսական և իրավական նախադրյալները» վերտառությամբ 1-ին գլուխը բաղկացած է չորս պարագրաֆից:

Ատենախոսության 1-ին գլխի՝ «Եվրոպական ընդհանուր իրավունքի վերլուծության մեթոդաբանական և իրավական նախադրյալները» վերտառությամբ 1.1. պարագրաֆում հանգամանորեն քննարկվում են եվրոպական ընդհանուր իրավունքի ուսումնասիրման տեսական-մեթոդաբանական և իրավական նախադրյալները: Որպես մեթոդաբանական նախադրյալներ հանդիսանում են սկզբնաղբյուրների քննական վերլուծությունը, պատմականության սկզբունքը և համակարգային մոտեցումը: Իրավական նախադրյալների թվին են դասվում հռոմեական դասական և հետդասական իրավունքը, հռոմեական իրավունքի ռեցեպցիան, ֆեոդալական Եվրոպայի իրավունքը և կանոնական իրավունքը: Նշվածներն այս կամ այն չափով հիմք են ծառայել եվրոպական ընդհանուր իրավունքի ձևավորման համար:

Ատենախոսության 1-ին գլխի՝ «Շրջափուլային (ցիկլիկ) մոտեցում հռոմեական իրավունքի ուսումնասիրության նկատմամբ» վերտառությամբ 1.2. պարագրաֆում քննարկվում է քաղաքակրթական մոտեցումը՝ որպես հռոմեական իրավունքի ու դրա ռեցեպցիայի հիմնախնդիրների ուսումնասիրության մեթոդ, որը թույլ է տալիս հռոմեական իրավունքը դիտարկել իբրև ժամանակակից իրավական տեսության հիմք:

Ատենախոսության 1-ին գլխի՝ «Եվրոպական (մայրցամաքային) ընդհանուր իրավունքի ձևավորման պատմական նախադրյալները» վերտառությամբ 1.3. պարագրաֆում քննարկվում են միջնադարյան Եվրոպայի քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրոնական, մշակութային գործոնները, որոնց ուղղակի և անուղղակի ազդեցությամբ աստիճանաբար ձևավորվում է Եվրոպայի ընդհանուր իրավունքի հիմնական սկզբունքները և իրավակարգավորումների բովանդակության հիմնարար մոտեցումները:

Ատենախոսության 1-ին գլխի՝ «Հռոմեական իրավունքը և դրա ռեցեպցիան որպես պատմաիրավական երևույթ միջնադարյան Եվրոպայում» վերտառությամբ 1.4. պարագրաֆում բացահայտվում է հռոմեական իրավունքի ռեցեպցիայի էությունն ու նշանակությունը, նրա որոշիչ ազդեցությունը միջնադարյան եվրոպական իրավագիտության զարգացման և եվրոպական պոզիտիվ իրավունքի ձևավորման վրա:

Ատենախոսության՝ «Մայրցամաքային ընդհանուր իրավունքի ձևավորման ու

զարգացման հիմնական ուղենիշները» վերտառությամբ 2-րդ գլուխը բաղկացած է երեք պարագրաֆից:

Ատենախոսության 2-րդ գլխի՝ «Հռոմեական իրավունքի ռեցեպցիայի վերաիմաստավորումը XII-XIV դդ. Արևմտյան Եվրոպայում jus commue (ընդհանուր իրավունքի) ձևավորման համատեքստում» վերտառությամբ 2.1. պարագրաֆում հանգամանորեն վերլուծության են ենթարկվում հռոմեական իրավունքի ռեցեպցիայի իմաստավորման գործընթացը XII-XIV դարերում Արևմտյան Եվրոպայում, երբ զարգանում է քաղաքային կյանքը, առևտուրը, ապրանքաշրջանառությունը և վերջապես ձևավորվում են եվրոպական առաջին համալսարանները, վերջիններս գործունեության շնորհիվ ոչ միայն յուրացվում ու տարածվում է հռոմեական իրավունքի հիմնարար ինստիտուտները, իրավական միտքը, այլև ձևավորվում են նոր իրավական սկզբունքներ, օրինակ, օրենքի գերակայությունը, աշխարհիկ օրենսդրության նշանակությունը հասարակության կայունություն և բնականոն զարգացման համար:

Ատենախոսության 2-րդ գլխի՝ «Մայրցամաքային Եվրոպայի ընդհանուր իրավունքի ձևավորման հիմնական փուլերը» վերտառությամբ 2.2. պարագրաֆում ուրվանշվում է արդի եվրոպական իրավունքի պատմական զարգացման հիմնական փուլերը: Դրանք են՝ սովորութային իրավունքի շրջանը, համալսարանական կամ պրոֆեսորական իրավունքը, ազգային և տարածաշրջանային իրավունքը, օրենսդրական իրավունքը (կոդիֆիկայի շրջանը), եվրոպական ընդհանուր իրավունքի ժամանակակից շրջանը: Այդ իրավունքների ձևավորման ու զարգացման վրա էական ազդեցություն են ունեցել հետևյալ իրավական ուսմունքները կամ հայեցակարգերը՝ Հռոմեական դոգմատիկ իրավագիտությունը, կանոնական իրավունքը, իրավունքի պատմական դպրոցը, պոզիտիվիստական և վերլուծական իրավագիտական տեսությունները, բնական իրավունքի տեսությունը և արդի ժամանակաշրջանի իրավաբանական-ազատական իրավափիլիսոփայությունը:

Ատենախոսության 2-րդ գլխի՝ «Մայրցամաքայի ընդհանուր իրավունքի կայացման հիմնախնդրները» վերտառությամբ 2.3. պարագրաֆում համակողմանի քննարկվում է եվրոպական ընդհանուր իրավունքի կայացման հիմնական գործոնների էությունն ու բովանդակությունը: Եվրոպական ընդհանուր իրավունքի կայացման գործում էական դերակատարում են ունեցել հռոմեական իրավագիտությունը, քրիստոնեական արժեհամակարգը, ընդհանուր մշակույթը (վերածնունդը, ռեֆորմացիան, լուսավորությունը, ազատական մտածողությունը, մարդու բնական իրավունքների տեսությունը, իրավունքի գերակայության գիտակցումը և դրա անվերապահ ընդունումը, ժողովրդավարական սկզբունքները) և այլ համամարդկային արժեքները:

Ատենախոսության 2-րդ գլխի՝ «Հռոմեական իրավունքի և իրավագիտության ժամանակակից նշանակությունը և դերը ազգային իրավունքի կատարելագործման խնդրում» վերտառությամբ 2.4. պարագրաֆի շրջանակներում նախ խոսվել է այն մասին, թե առհասարակ հռոմեական իրավունքն իրավագիտության և ազգային իրավունքի համակարգի վրա կոնկրետ ինչ ազդեցություն կարող է ունենալ: Այնուհետև վերլուծության է ենթարկվել

հռոմեական իրավունքի ազդեցությունը հայրենական մասնավոր իրավունքի՝ մասնավորապես քաղաքացիական իրավունքի վա: Ըստ այդ՝ քննարկվել է ինչպես հայրենական քաղաքացիական իրավունքի վրա հռոմեական մասնավոր իրավունքի ռեցեպցիայի առանձնահատկությունները, այնպես էլ նրա դրսևորումները քաղաքացիական իրավունքի առանձին ինստիտուտներում:

Ատենախոսության եզրակացությունում ներկայացվել են հետևյալ հիմնական եզրահանգումները՝

1. Աշխարհի ամենահին և ամենատարածված իրավական համակարգը՝ մայրցամաքային եվրոպական ընդհանուր իրավունքը (ռոմանագերմանական իրավունքը), զարգացել է պատմական երկարատև ժամանակաշրջանում՝ հիմքում ունենալով հռոմեական դասական իրավունքը, իրավաբանական հասկացությունները և իրավական հայեցակարգերը:

2. Հռոմեական իրավունքի ռեցեպցիան, իբրև հասարակական կյանքի խոշոր ու բարդ երևույթ, իբրև Հին աշխարհի, Միջնադարի և Նոր ժամանակների իրավական զարգացման կապող օղակ, անփոփոխ կերպով գրավում է և դեռևս երկար ժամանակ գրավելու է նրանց ուշադրությունը, ովքեր հետաքրքրվում են իրավունքով ու դրա պատմությամբ: Ռեցեպցիան միջնադարյան հասարակության անհրաժեշտ արդյունք է, որի բավարարմանն էլ այն ուղղված է: Դա առանձին իրավական համակարգերի ինքնավար զարգացման հակաթեզ չէ, այլ մի գործոն, որը խթանում, արագացնում է այդ զարգացումը:

3. Ռեցեպցիան (լատ.՝ receptio ընդունում), ավատական և բուրժուական աշխարհում հռոմեական իրավունքի նկատմամբ կիրառելիս, բացատրվում է իբրև գործողություն, վերականգնում, փոխառություն, ընտրություն, վերամշակում, յուրացում: Ռեցեպցիան չէր նշանակում ստրկատիրական իրավունքի դասային որոշակիության ընկալում: Վերջինս դրսևորվում էր միայն այն նորմատիվ և գաղափարատեսական բովանդակության վերամշակման և յուրացման մեջ, որը եղել է երկրորդական, ածանցյալ և համեմատաբար ինքնուրույն իրավունքի կոնկրետ դասային էության նկատմամբ, ուստի և կարող էր փոխանցվել իր տարբեր տեսակներին: Պատմականորեն ռեցեպցիայի առաջին քայլերն են հռոմեական իրավունքի ուսումնասիրումը, դրա հիմնական բովանդակությունը, նոր իրավունք ստեղծելիս հին փորձի օգտագործում:

4. Գլոսսատորների և կոմենտատորների (հետգլոսատորների) դպրոցները հիմնեցին մայրցամաքային իրավաբանական դոգմատիկայի սկզբնավորումը, հաստատեցին դոգմատիկ հետազոտությունների օբյեկտի սահմանները, սահմանեցին դրա գոյաբանական և իմացաբանական առումները, ձևավորեցին իրավագիտության ուրույն լեզուն և ոճաբանությունը, ուսուցանեցին հեղինակային տեքստի վերաբերյալ իրավաբանների գիտակցական մոտեցումը, ձևավորեցին և արմատավորեցին իրավունքի ընդհանուր սկզբունքների վերաբերյալ պատկերացումները, հռոմեական իրավունքի՝ որպես «ընդհանուր իրավունք» (jus commue) միջոցով հաստատեցին իրավագիտության ելակետային, գաղափարական և հայեցակարգային մոտեցումների հարաբերական միասնությունը:

5. Հռոմեական իրավունքի նկատմամբ փուլի ընկալումը և դրա ռեցեպցիան

ունի տարբերակող նշանակություն: Եթե հռոմեական իրավունքի պատմության մեջ «շրջափուլը» արտահայտում է ամբողջական իրավական համակարգի շարժումը, ապա ռեցեպցիայի նկատմամբ կիրառվելիս՝ այն հռոմեական իրավունքի փորձի յուրացման որոշակի սահման է: Ռեցեպցիայի տարածումը չի համընկնում միայն ավատական իրավունքի շարժման հետ: Դրա վերջին փուլը բաժին է հասնում բուրժուական իշխանության հաստատման ժամանակներին:

6. Վաղ միջնադարից սկսած՝ հռոմեական իրավունքն իր ուրույն դերն է ունեցել եվրոպական, ավելի ճիշտ՝ ռոմանագերմանական իրավական ընտանիքի ձևավորման մեջ:

Եվրոպական պետություններում հռոմեական իրավունքը բավականին արագ ընդունվեց և յուրացվեց, որը կապված էր իրավունքի ձևավորման մեթոդի հետ: Այդ փուլում առկա էին այնպիսի իրավական ինստիտուտների նախադրյալների զարգացումը, ինչպիսին էին՝ քաղաքացիությունը, ինչպես նաև հատուկ անհատականություն, ով տեղ ունի նաև ժամանակակից ճյուղային (ոլորտային) իրավունքում: Այդ իրավական ինստիտուտներն այս կամ այն իրավական համակարգի անքակտելի բաղկացուցիչ մաս են, և ըստ իրենց վիճակի՝ կարելի է դատել դրա զարգացվածության մակարդակի մասին:

7. Վերը նշված ինստիտուտներն իրենց դրսևորումներն են ստացել այնպիսի իրավական հուշարձաններում, ինչպիսիք են՝ «Lex Romana Visigothorum»՝ հռոմեական վեսթգոթերի օրենքները, որը պարունակում է իրավունքի դրույթներ վեսթգոթերի համար հատուկ օրենքում՝ «Lex Visigothorum», և որում արտահայտված են գերմանական առանձնահատկությունները:

Երկու օրենքներն էլ գործող էին ինչպես գերմանացի, այնպես էլ հռոմեացի քաղաքացիների առումով: Հռոմեական իրավունքի իրավաբանական տեխնիկայի զարգացման առավել բարձր մակարդակի պատճառով, օրենքներն, այնուամենայնիվ, ունեին այնպիսի գծեր, որոնք հատուկ են հռոմեական իրավունքին: Վեսթգոթյան իրավունքը թույլ է տալիս հետևել գերմանական իրավական աղբյուրի տիպիկ աստիճանական ռոմանացմանը: Այսպես էր ընթանում ռոմանագերմանական գրավոր իրավունքի ծնունդն ու կազմավորումը:

8. Եվրոպայում քրիստոնեության տարածման արդյունքում, հասարակական հարաբերությունների զարգացման հերթական փուլում (ֆեոդալիզմի դարաշրջան), ռոմանագերմանական իրավունքի առաջացման և կազմավորման դրական գործընթացը (որպես ռոմանագերմանական իրավական ընտանիքի ինստիտուցիոնալ հիմք) ժամանակավորապես մոռացության մատնվեց: Սակայն ռոմանագերմանական իրավունքի պահպանված գրավոր հուշարձանները, որոնք հանդիսանում էին հիմնական տարրեր, և որոնց օգնությամբ ծնվեց այդ համակարգը, հետագայում՝ առավել առաջընթաց պատմական պայմաններում, հիմք հանդիսացան նրա առաջացման և հետագա ձևավորման համար:

9. Մայրցամաքային ընդհանուր իրավունքի ծագումը կապվում է 13-րդ դարի հետ: Դա պայմանավորված էր համալսարաններում հռոմեական իրավունքի հետազոտման վերածննդի հետ:

Պետք է նշել, որ հռոմեական իրավունքի ավանդական տեքստերի մեկնաբանման հիման վրա ստեղծված գլոսսատորների դպրոցը դեռևս 11-րդ

դարում առաջացել էր Հյուսիսային Իտալիայում: Այդ դպրոցի թագը (պսակը) դարձավ հայտնի իրավաբան Ակուրսիայի աշխատանքը՝ «Glossa Ordinaria», որը սկզբնաղբյուր հանդիսացավ գլոսսատորների, հետգլոսատորների, հումանիզմի ներկայացուցիչների համար, որոնք իրենց մեկնաբանություններում, տեսական և հայեցակարգային մոտեցումներում ավելի խորացրին ու հիմնավորեցին իրենց ու հետագա ժամանակաշրջանների համար հռոմեական իրավունքի ուսումնասիրության ու գործածության անհրաժեշտությունը:

10. Եվրոպայի կողմից հռոմեական իրավունքի համընդհանուր ընդունումը կապված է իրավաբանական դպրոցների ավելի ուշ շրջանի՝ կոնսիլիատորների աշխատանքների հետ: Դպրոցը գտնվում էր Հարավային Իտալիայում և հիմնվում էր նախորդող շրջանի գլոսսատորների գիտական աշխատանքների վրա: Կոնսիլիատորների դպրոցի գիտական աշխատանքը՝ «Contnmunis pinio doctorem» («իրավունք դոկտորների ընդհանուր եզրակացությունը»), օժտված էր հատուկ հեղինակությամբ: Ամենահայտնի կոնսիլիատորը Բարտոլո դե Սասսոֆերրատոն (1313-1357 թթ.) էր:

11. Մայրցամաքային ընդհանուր իրավունքի ձևավորման մեջ ոչ պակաս կարևոր դեր խաղաց քաղաքային, տեղական սովորութային և կանոնական իրավունքը: Ուշ միջնադարում և արևմտյան Եվրոպայի տարածքում բուրժուական հարաբերությունների զարգացման սկզբում՝ XII-XIII դարերում, տեղի էր ունենում իրավունքի ռոմանագերմանական ընտանիքի կազմավորումը, ինչը պայմանավորված էր գրավոր իրավունքի վրա հիմնված հասարակական հարաբերությունների զարգացման անհրաժեշտությամբ:

12. Միջնադարյան իրավաբանների և իրավական դպրոցների հայեցակարգային մոտեցումների ու իրենց իսկ կողմից մշակված մեթոդաբանական հիմունքների շնորհիվ՝ աստիճանաբար ձևավորվեց մայրցամաքային իրավունքի համակարգի կառուցվածքային տարրը՝ իրավունքի հիմնարար սկզբունքները (օրենքի գերակայությունը, պոզիտիվ իրավունքի արմատավորումը, իրավաբանական մտածողությունը, համալսարանական (պրոֆեսորական) կամ իրավաբանական իրավունքը, իրավաբանների դասը և այլն), որոնք կազմում են ներկայիս մայրցամաքային իրավունքի գաղափարական և ինստիտուցիոնալ հիմքերը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Արմենակյան Ս.Ա., Հռոմեական դասական և հետդասական օրենսդրության կոդիֆիկացիան // «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդաբանական հանդես, Եր., Աստղիկ գրատուն, 2019, էջ 58-59:

2. Արմենակյան Ս.Ա., Հռոմեական իրավունքի ռեցեպցիայի պատճառներն ու աղբյուրները // Դատական իշխանություն, մարտ-ապրիլ, 2019, 3-4 (237-238), Եր., Վ. Սարգսյան 5, էջ 12-16:

3. Արմենակյան Ս.Ա., Հռոմեական իրավունքի ռեցեպցիայի առանձնահատկություններն Արևմտյան Եվրոպայում // Դատական իշխանություն,

մայիս-հունիս, 2019, 5-6 (239-240), Եր., Վ. Սարգսյան 5, էջ 20-23:

4. Արմենակյան Ս.Ա., Հռոմեական իրավունքի ռեցեպցիայի խնդրահարույց տեսանկյունների շուրջ // Դատական իշխանություն, նոյեմբեր-դեկտեմբեր, 2019, 11-12 (245-246), Եր., Վ. Սարգսյան 5, էջ 3-15:

5. Արմենակյան Ս.Ա., Հռոմեական իրավունքի նշանակությունն իրավագիտության և եվրոպական իրավական համակարգի ձևավորման ու զարգացման գործում // Դատական իշխանություն, հունվար-փետրվար, 2020, 1-2 (247-248), Եր., Վ. Սարգսյան 5, էջ 42-49:

6. Արմենակյան Ս.Ա., Մայրցամաքային Եվրոպայի ընդհանուր իրավունքի կայացման հիմնական փուլերը // «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդաբանական հանդես, Եր., Տիր հրատ., 2020, էջ 57-63:

АРМЕНАКЯН САРКИС АРМЕНОВИЧ

РЕЦЕПЦИЯ РИМСКОГО ПРАВА И ЕЕ РОЛЬ И ЗНАЧЕНИЕ В ФОРМИРОВАНИИ И ЭВОЛЮЦИОННОГО РАЗВИТИИ ЕВРОПЕЙСКОГО ПРАВА

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01 – Теория и история государства и права, история государственных и правовых учений. Защита состоится 2-го декабря 2023 года в 11^{00} часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. Овсепа Эмина 123).

РЕЗЮМЕ

Римские юристы создали науку римского права, которая с древних времен имела и до сих пор имеет высокую репутацию. В истории человечества это была первая юриспруденция с абстрактными нормами светского права. Наследие римских юристов продолжает активно использоваться в современной правовой доктрине.

В частности, благодаря рецепции римское право как прямым, так и косвенным образом влияло и продолжает влиять на развитие европейского законодательства и юриспруденции. Это влияние продолжается в различных сферах права - от гражданского до международного. Понятия, категории, институты, основные принципы римского права содержатся в странах континентальной правовой системы.

В рамках диссертационной работы автор подробно рассмотрел теоретико-методологические и правовые предпосылки изучения европейского общего права. Такими предпосылками являются экспертиза, анализ первоисточников, принцип историчности и системный подход, к которым относят римское классическое и постклассическое право, рецепция римского права, право феодальной Европы и каноническое право. Автор констатирует, что все вышуказанное в той или иной мере послужило основой для формирования европейского обычного права.

В рамках диссертации обсуждался «цивилизованный» подход, как метод изучения проблем римского права и его рецепции, что позволило автору рассмотреть римское право, как основу современной теории права.

В дальнейшем автор сделал предметом обсуждения политические, социально-экономические, религиозные и культурные факторы средневековой Европы, под прямым и косвенным влиянием которых постепенно

формировались основные принципы европейского обычного права и фундаментальные подходы к содержанию правовых норм.

В рамках диссертации были раскрыты сущность и значение рецепции римского права, ее решающее влияние на развитие средневековой европейской юриспруденции и формирование европейского позитивного права.

В рамках работы были всесторонне проанализированны процессы осмысления рецепции римского права в Западной Европе в XII-XIV вв., в то время когда развивалась городская жизнь, торговля, коммерция и, наконец, формировались первые европейские университеты, благодаря чему были не только усвоены и распространены основные институты римского права, юридическое мышление, но и сформированы новые правовые принципы, например, верховенство закона, значение светского законодательства для обеспечения стабильности и нормального развития общества.

В рамках исследования автор обозначил основные этапы исторического развития современного европейского права. Это: период традиционного права, университетское или профессорское право, национальное и региональное право, законодательное право (период кодификации), современный период европейского общего права. Автором зафиксировано, что на формирование и развитие этих прав существенное влияние оказали следующие правовые доктрины или концепции: римско-догматическая юриспруденция, каноническое право, историческая школа права, позитивистская и аналитическая юриспруденция, теория естественного права и юридико-либеральная философия права Нового времени.

В диссертации всесторонне рассмотрены и обсуждены сущность и содержание основных факторов становления европейского общего права. В частности, автор констатировал, что римская юриспруденция, христианская система ценностей, общая культура (возрождение, реформация, просвещение, либеральное мышление, теория естественных прав человека, осознание верховенства права и его безусловного признания, демократические принципы) и другие общечеловеческие ценности сыграли значительную роль в становлении европейского общего права.

Наконец, в рамках исследования прежде всего обсуждалось, какое конкретное влияние римское право вообще может оказывать на юриспруденцию и национальную правовую систему. Затем было проанализировано влияние римского права на отечественное частное право, в частности на гражданское право. Соответственно, обсуждались особенности рецепции римского частного права на армянское гражданское право, а также его проявления в отдельных институтах гражданского права.

ARMENAKYAN SARGIS ARMEN

THE RECEPTION OF ROMAN LAW AND ITS ROLE AND SIGNIFICANCE FOR THE FORMATION AND EVOLUTION OF THE EUROPEAN LAW

Competition for the degree of Candidate of Juridical Sciences is the speciality of 12.00.01 - Theory and history of state and law, history of state and legal doctrines. The defence of the dissertation is schedulaed for 18 December, 2023, at 11^{00} in a panel session of the Professional Council 063 of Jurisprudence of Russian-Armenian University of the RA Higher Certification Comission (123, H. Emin, Yerevan, 0051).

SUMMARY

The science of Roman law was created by Roman jurists, which had a high reputation from ancient times and still maintains it. In the history of mankind, this was the first jurisprudence with abstract norms of secular law. The legacy of Roman jurists continues to be actively used in modern legal doctrine.

Particularly, due to reception, the Roman law, both directly and indirectly, influenced and continues to influence the development of European legislation and jurisprudence. This influence continues in various areas of law - from civil to international. The countries of continental legal system include the concepts, categories, institutions and basic principles of Roman law.

Within the framework of dissertation, the author examined in detail the theoretical, methodological and legal prerequisites for the study of European common law. The examination analysis of original sources, the principle of historicity and the systematic approach are the mentioned prerequisites, which include Roman classical and postclassical law, the reception of Roman law, the law of feudal Europe and canon law. The author states that all of the above mentioned served as the basis for the formation of European customary law to one extent or another.

Within the framework of the dissertation, the "civilized" approach was discussed as a method for studying the problems of Roman law and its reception, which allowed the author to consider Roman law as the basis of modern legal theory.

Further the subject of discussion were political, socio-economic, religious and cultural factors of medieval Europe, under the direct and indirect influence of which the basic principles of European customary law and fundamental approaches to the content of legal norms were gradually formed.

Within the framework of the dissertation, the essence and significance of the

reception of Roman law, its decisive influence on the development of medieval European jurisprudence and the formation of European positive law were revealed.

As part of the work, the processes of understanding the reception of Roman law in Western Europe in the 12th-14th centuries were comprehensively analyzed, at a time when urban life, trade, commerce developed and, finally, the first European universities were formed, due to which the main institutions of Roman law, legal thinking, were not only assimilated and disseminated, but also new legal principles were formed, such as rule of law, the importance of secular legislation to ensure the stability and normal development of society.

As part of the study, the author outlined the main stages of the historical development of modern European law. These are: the period of traditional law, university or professorial law, national and regional law, legislative law (codification period), the modern period of European common law. The author recorded that the following legal doctrines or concepts had a significant impact on the formation and development of these rights: Roman dogmatic jurisprudence, canon law, the historical school of law, positivist and analytical jurisprudence, the theory of natural law and the legal-liberal philosophy of law of modern times.

The dissertation comprehensively examines and discusses the essence and content of the main factors in the formation of European common law. In particular, the author stated that Roman jurisprudence, the Christian system of values, the general culture (Renaissance, Reformation, Enlightenment, liberal thinking, theory of human natural rights, awareness of the supremacy of law and its unconditional acceptance, democratic principles) and other human values played a significant role in development of European common law.

Finally, in the framework of research it was spoken about exactly what impact could have the Roman Law on the Jurisprudence and National Law System. Then, the impact of the Roman Law on the Private National Law, particularly of the Civil Law was analyzed. Thus, reception peculiarities of the Roman private Law on the National Civil Law, as well as its display in separate institutions of the Civil Law.